



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» մարտի 2018թ.

N16

ք. Ստեփանակերտ

**Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման
հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին**

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 21-րդ հոդվածի 3-րդ մասով, 28-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածներով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կանոնակարգը՝ նոր խմբագրությամբ (Կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 33 առ 23.03.2015 թ. հրամանը:
3. Հրամանն ուղարկել ԱՀ գլխավոր դատախազի տեղակալներին, գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԱՀ քաղաքապետներին:
4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական

Ա.Ա.Մոսիյան

Հաստատված է ԱՀ գլխավոր
դատախազի 2018թ. մարտի 26-ի թիվ
16 հրամանով

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՐՑԱԽԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) լիազորությունների շրջանակը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքով, սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

3. Հանձնաժողովին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ապահովում է Արցախի Հանրապետության դատախազության աշխատակազմը և ԱՀ գլխավոր դատախազության կազմակերպա-վերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժինը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Հանձնաժողովի խնդիրներն են՝

ա) ապահովել է ԱՀ դատախազության դատախազների և քննիչների թեկնածուների ցուցակի համալրման համար անցկացվող տարեկան բաց մրցույթին (այսուհետ՝ մրցույթ) մասնակցելու հավասար մատչելիությունը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից,

բ) ապահովել դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու գործընթացը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան,

գ) ապահովել դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակի ձևավորումը:

5. Հանձնաժողովը՝

ա) ԱՀ դատախազության աշխատակազմից ստանում է մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիների փաստաթղթերը, ինչպես նաև դրա անցկացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր և պարագաներ,

բ) դատախազների և քննիչների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով հայտերի ընդունման մասին առնվազն մեկ ամիս առաջ հրապարակում է հայտարարություն,

գ) մերժում է հայտերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջներին չբավարարող հայտերի ընդունումը և դրանք վերադարձնում հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում,

դ) հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից անօրինական ճանաչվելու դեպքում քննարկում է հայտատուի հայտը,

ե) քննության է առնում փաստաթղթերի ճշտությունը, ամբողջականությունը և կայացում է որոշում՝ դիմած քաղաքացիներին մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ չթույլատրելու մասին,

զ) մինչև թեստավորումն սկսելը ստուգում և կնքում է անփոփոխությունը,

է) որակավորման հանձնաժողովը կազմում է թեստեր՝ թեստավորման փուլն անցկացնելու համար,

ը) անցկացնում է մրցույթի մասնակիցների թեստավորումը,

թ) ստուգում և գնահատում է մասնակիցների թեստավորման արդյունքները

ժ) անփոփոխում և հրապարակում է թեստավորման արդյունքները,

ժա) քննարկում է թեստավորման արդյունքների հետ կապված մասնակիցների բողոքները,

ժբ) հաստատում և հրապարակում է հարցազրույցի փուլ անցած մասնակիցների ցուցակը,

ժգ) որոշում է կայացնում հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրը անցկացնելու մասին,

ժդ) մասնակիցների հետ անցկացնում է հարցազրույց,

ժե) ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական ունակությունները և բարոյական հատկանիշները,

ժզ) յուրաքանչյուր մասնակցի հարցազրույցից անմիջապես հետո բաց քվեարկությամբ կայացվում է համապատասխան որոշում,

ժէ) անփոփոխում է մրցույթի արդյունքները,

ժը) այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, ներկայացնում է գլխավոր դատախազին, որն իր համար ընդունելի թեկնածուներին ընդգրկում է դատախազների և քննիչների թեկնածուների ցուցակում,

ժթ) պաշտոնապես հրապարակում է մրցույթի արդյունքները,

ի) ԱՀ գլխավոր դատախազի սահմանած կարգին համապատասխան իրականացնում է դատախազների և քննիչների ատեստավորումը,

իա) իրականացնում է դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակը ընդգրկելու հարցը և ձևավորման աշխատանքները՝ դատախազների և քննիչների հերթական ատեստացիայի ժամանակ, արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները առաջարկություն են ներկայացնում որակավորման հանձնաժողովին՝ դատախազի և քննիչի նկատմամբ որպես խրախուսում նրան առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ, ներկայացնելով համապատասխան գնահատագիր: Դատախազը և քննիչը ընդգրկվում են դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում, բացառիկ դեպքում՝ երբ որակավորման հանձնաժողովը որոշում է կայացնում ուսումնառությունից ազատված անձին միաժամանակ դատախազների և քննիչների

թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու վերաբերյալ,

իբ) եզրակացություն է տալիս ԱՀ քաղաքապետախառնակազմին, ԱՀ գլխավոր դատախազության բաժինների պետերին համապատասխան պաշտոնին նշանակելու հարցում,

իգ) ատեստավորվող դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ որակավորման հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը գործում է մինչև տվյալ անձի հերթական ատեստավորումը,

իդ) իրականացնում է օրենքով, սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

6. Հանձնաժողովը բաղկացած է 9 անդամից: Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում ԱՀ գլխավոր դատախազի կողմից նշանակված գլխավոր դատախազի 1 տեղակալ, 4 դատախազ և 4 իրավաբան՝ 3 տարի ժամկետով: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

7. Հանձնաժողովն ունի նախագահ և քարտուղար:

8. Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները,

բ) վարում է հանձնաժողովի նիստերը,

գ) կազմակերպում է մրցույթի անցկացման, դատախազների և քննիչների ատեստավորման և ծառայողական առաջխաղացման ցուցակի ձևավորման աշխատանքները՝ համաձայն սահմանված կարգի,

դ) իրականացնում է մրցույթի անցկացման, դատախազների և քննիչների ատեստավորման և ծառայողական առաջխաղացման ցուցակի ձևավորման աշխատանքների հսկողությունը,

ե) իրականացնում է սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

9. Հանձնաժողովի անդամը՝

ա) վարում է նիստերը հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ,

բ) իրականացնում է մրցույթի անցկացման աշխատանքների հսկողություն,

գ) մասնակցում է անցկացվող մրցույթի կամ ատեստավորման հարցազրույցի փուլին, տալիս հարցեր մասնակիցներին կամ դատախազներին ու քննիչներին,

դ) մասնակցում է հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր մասնակցի համար անցկացվող քվեարկությանը՝ քվեարկելով կողմ կամ դեմ,

ե) ստորագրում է մրցույթի ամփոփման արդյունքները, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրության կողքին գրառում է «հատուկ կարծիքը կցվում է» բառերը,

զ) ծանոթանում է նիստերի արձանագրություններին,

է) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒՄԸ

10. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

11. Հանձնաժողովի նիստերը իրավազոր են հանձնաժողովների անդամների առնվազն կեսից ավելի մասնակցության դեպքում:

12. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներով:

13. Հանձնաժողովի նիստերը արձանագրվում են:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

14. Հանձնաժողովի գործունեությունը կարող է դադարել ԱՀ գլխավոր դատախազի կողմից՝ համապատասխան իրավական ակտի ընդունմամբ:

15. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: